

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՄԻ
ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1979

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հին հայերենի փոխառյալ բառապաշարի ամենահարուստ շերտը իրանականն է, որի գերակշիռ մասը կազմությանը պարզ (արմատական և ածանցավոր) բառեր են. հմմտ. ազատ, ազգ, ախոռ, ակամալ, համար, պահ, պահակ... և այլն: Կան նաև րարդ բառեր, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ դասակարգմամբ. ա) բառեր, որ կազմությանը բարդ են ծագումնաբանորեն, իսկ հայերենում գիտակցվում որպես պարզ. ասպետ, աւազան, գոմէշ, ճշմարիտ, շատրուան, շպետ, պաշտպան, պատասխանի... բ) բառեր, որոնք ծագումնաբանորեն բարդ են, հայերենում էլ բառաձևից գիտակցվում են որպես այդպիսիք, սակայն բաղադրիչները, կամ բաղադրիչներից մեկը, հայերենում անկախաբար չեն կիրառվում. հմմտ. ախտարմուլ, ամբարտաւան, աշխոյժ, ապարահ, դանդանաւանդ, դարապաս, ջատագով, վարապան... գ) բարդ բառեր, որոնց բաղադրիչները անկախ կիրառություն ունեն. ազահակամք, ազատագունդ, ազատատոհմ, աշխարհակերպ, բազմատանջ, դժուարաբախտ, նշանադիմակ, շնորհավաճառ, պատկերակերպ, սեագոյն, վատահաճոյ, վատափառ... և այլն: Մեր հաշվումներով վերջին տիպի բարդ բառերի թիվը հասնում է մոտ 500-ի: Սրանց մեծ մասը, սակայն, փոխառություններ չեն, այլ՝ փոխառյալ բաղադրիչներով կերտված հայերեն բառեր:

Փոխառությունների քննության ընթացքում ուշագրավ իրողություններ են բացահայտվում կապված բառերի (արմատների) այլ կիրառության հետ. ա) նկատելի է, որ իրանական ծագում ունեցող մի շարք բառեր (արմատներ) հայերենում անկախաբար չեն կիրառվում, այլ կազմում են բարդ կամ ածանցավոր ձևեր: բ) Միևնույն արմատը կամ արմատի հնչյունափոխված տարբերակը ներկայանում է տարբեր բառերում: Սկսենք առաջիններից:

Անկախաբար չկիրառվող բառեր (արմատներ)

Աշխատ¹ - բայահիմքից կազմված են աշխատեմ, աշխատիմ, նաև՝ աշխատեցուցանեմ բայերը, առավել հաճախական է աշխատ առնեմ բայական հարադրությունը: Աշխատ արմատով և համապատասխան ածանցներով կազմվում են դերբայ, մակբայ և գոյական. աշխատիլ, աշխատաբար, աշխատութիւն: Առկա են նաև մի շարք բարդ բառեր. աշխատասէր, աշխատախոնջ, դառնաշխատ և այլն: Աշխատ-ով կազմված բարդ բառերը հիմնականում ուշ գրաբարյան են:

Ապաշխ(ար)-ով ունենք ապաշխարան, ապաշխարեմ, ապաշխարող, ապաշխարութիւն, նաև՝ անապաշխարան, անապաշխար, անապաշխարութիւն: Ապաշխար-ով կազմված մի շարք բառեր գործածական են արդի գրական հայերենում ու բարբառներում, սակայն ի տարբերություն գրաբարի՝ միայն կրոնական բովանդակություն ունեն:

Ապառ-ը հանդես է գալիս որպես մի շարք հատուկ անունների բաղադրիչ: Այն գրաբարում և այժմ էլ տեղանվանակերտ ձևույթ է: Գրաբարում ունենք Վաղարշապատ, Ներսէհապատ, Պերդապատ...: Ապատ-ը ածանցների շար-

¹ Աշխատը ըստ Բենվենիստի *xsāt-, միջ. իր. *xsāi-ը, իսկ ուշխարհ-ը (ապտ) աշխարհ. xsād- միջ. իր. xsād-ն է: Առկա են երկու նման, բայց տարբեր աղբյուրներ. տե՛ս Revue des études arméniennes, Paris, 1964, p. 7 (այսուհետև՝ RE \):

բում չենք ներկայացնում, որովհետև ղրանով կազմված ձևերում թերևս գիտակցվում է շեն, շեն տեղ, վայր» իմաստը. իր. *špat* «շեն»: Ապառ-ը գրաբարում անկախ կիրառություն չունի: Թեպետ նշՔ-ն և Արմատական բառարանը մեզ հետաքրքրող բառի առանձին գործածության օրինակ են բերում Նղիշից. նույնպես տեղիս յապառա (ընդգծումը մերն է—լ. Շ.) և լանա-յատս միայնանոցս շինէին. սակայն դա եզակի և սրբագրելի օրինակ է: Ապատ-ի անկախ գործածության հանդիպում ենք Նղիշի մի բանի ձևագրերում ու հրատարակություններում միայն: Համոզիչ է ն. Տեր-Մինասյանի ուղղումը. յամենայն տեղիս անապատս միայնանոցս շինէին²:

Ապառթան- հիմքով ապարթանեմ «խրոխտանալ, հանդգնել» բայը մեկ անգամ օգտագործել է Նղիշեն. ի վեր քան զմարդկային բնութիւն ընդլզեալ ապարթանէր (12): Ապառթանակա մեկ անգամ կիրառել է և Ազաթանգեղոսը. Ապրթանական... ղօրուն վաշտացեալ գնդօքն... ի ջուրսն կորնշել (268): ՆշՔ-ն էլ բերում է հենց նշված ձևը: Ինչպես նկատում ենք, ապառթան արմատով բառերը գրաբարում խիստ սահմանափակ են: Պետք է ենթադրել, որ այդ բառարմատի, թերևս և ղրանով կազմված նոր ձևերի իմաստները շատերին մատչելի չեն եղել:

Ապր- արմատը վկայված է դարձյալ մեկ անգամ՝ ապրայոյզ (Նրեակ մոյորակը) բառի մեջ: ՆշՔ-ում այս բառը չի ավանդված, այն որպես բառարանային միավոր գետեզված է Քաջունու բառարանում³: Ապրայոյզի առաջին բաղադրիչը՝ ապր-ը Աճառյանի կարծիքով պհլ. *apṛ*, *abr* «ամպ» բառն է:

Ասպ- «ձի» բառն էլ գրաբարում զարմանալիորեն անկախաբար կիրառված չէ, կամ համենայնդեպս նման կիրառություն մեզ չի հասել: Այնինչ բազմիցս հանդիպում է բարդ կամ ածանցավոր բառերում. հմմտ. ասպազան, ասպազեն, ասպազինեմ, ասպականի, ասպաճարական, ասպաստան, ասպաստանիկ, ասպատակ... և այլն: Հնարավոր է, որ այս բոլոր բառերն էլ ամբողջական փոխառություններ են, այս դեպքում էլ, սակայն, հայերենում թերևս գիտակցվել է բառի առաջին բաղադրիչի՝ ասպ-ի իմաստը:

Ատր- «կրակ» առկա է մի շարք բառերում՝ ատրագոյն, ատրուշան, ատրոճանակ... սրանք ամենայն հավանականությամբ ամբողջական փոխառություններ են: Ունենք նաև հայակագմ ձևեր. ատրորսկ, ատրորական, ատրական, ատրաշէկ⁴, ատրաշիկանալ: Ատրագոյն-ի դեպքում կարելի է ենթադրել, որ այն ամբողջական փոխառություն է. սակայն մերթեմիս պետք է համարել նաև բառի հայակագմություն լինելը, մանավանդ, որ զոյն բաղադրիչը գրաբարում ինքնուրույն ու հաճախակի կիրառություն ունի:

Արգ- ունենք անկախաբար չկիրառվող երեք համանուն արմատ. 1. արգ, «հարգ, արժեք, արժանիք». 2. արգ «գործ, աշխատանք» և 3. արգ «փոր, աղիք» (արգանդ, արգահատ): Առաջինը համարվում է իրանական փոխառություն: Ածանցված ձևերից նշենք անարգ, անարգաբար, անարգական, արգաւոր և այլն: Բարդ բառերից՝ մեծարգի, մարգարէանարգու, մեծարգոյ, հայրանարգու, արգադիր (արգադիր նուէր բառակապակցության մեջ): Հաճախական են նաև արմատի նախդրավոր ձևերը (զ)արգ, զարգանք, զարգանալ, զարգացումն, (յ)արգ, յարգել, յարգաւոր. յարգի... և այլն:

Արժ-ով ունենք արժեմ, արժեք...: Արժ-ով կազմությունները ավելի շատ են արդի գրական լեզվում: Աճառյանի կարծիքով առանձին փոխառություն է արժան բառը, որով ունենք բազմաթիվ նոր բառեր: Ըստ երևույթին արգ/արժ տարբերակները տարբեր ժամանակահատվածներում կատարված փոխառու-

² Տե՛ս Նղիշի Վասն Վարդանաւ եւ Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 6:

³ Տե՛ս Բաղդիր արուեստից և գիտութեանց եւ գեղեցիկ 'ղարութեանց, յօրենալ ի հ. Մանուէլ վարդապետէ Քաջունի. Վենետիկ, 1892, հ. բ, էջ 56, հ. Գ, էջ 19: Քաջունու հավաստմամբ բառը օգտագործել է Ա. Շիրակացին:

⁴ Ատրաշէկ-ը ոմանք համարում են նաև ամբողջական փոխառություն. իր. **atr-+say-aka-/syaka* (*sayi*) «փայլել, վառվել» (տե՛ս. «Вестник древней истории», 1973, № 1, с. 4):

թյուններ են: Փոխատու լեզվում էլ դրանք ժամանակային նախորդում ու հաջորդում են ենթադրում:

Արշա- բաղադրիչը առկա է արշալոյս (արշալուրջ) բառի մեջ: Այլ բառերի կազմում այն չի հանդիպում⁵:

Բազ- «աստված» արմատը հանդես է դալիս մի շարք հատուկ անունների կազմում որպես առաջին բաղադրիչ: Բազարան, Բազաւան, Բաղայաութ, Բաղարատ: Իբրև հասարակ անուն ունենք միայն քազին-ը և վերջինով նոր կազմություններ՝ բազնապետ, բազնադիտութիւն, բազնայարկ, բազնասէր...: Գրաբարում կա մի այլ քաղ արմատ ևս, «բաժին, ժառանգութիւն» իմաստով: Այս արմատով ունենք բաղ արկանել, բաղ անկանել «բաժին հանել», «բաժին ընկնել» հարադրութիւնը, բազորդ «ժառանգորդ» բառը: Բազ «բաժին» արմատը մեկ անգամ վկայված է և անկախաբար. Ձիք իմ ասէ որդեակ, որ ունիցի զբազ և բաժին իմ. (Նփք. Թագ., 402):

Բօս⁶- արմատը հայերենում հանդես է գալիս վ-նախորով, ըստ այսմ փաստորեն կարող ենք խոսել զբօս տարբերակի մասին, որն երևի իրանական արմատ +զ կազմութիւնն է: Զբօս-ն էլ անկախաբար չի կիրառվում, այն գտնում ենք մի շարք բառաձևերում՝ զբօսանալ, զբօսանիլ (զբօսնուլ) զբօսանք, զբօսուցիկ, զբօսացուցանել, բռնազբօսիկ և այլն:

Գաւ⁷- արմատը, հանդես գալով որպես բարդության բաղադրիչ, արտահայտում է «ցավ, հիվանդութիւն, հիվանդ» նշանակութիւնը: Բերենք մի քանի օրինակներ. գարադութիւն «աղիքների ցավ, փորհարութիւն». Իբրու փախրստական ի խոովեալ քաղաքէ ի մարմնոյն արտաքս անկեալ գարադութիւն և ողորկադութիւն հոսմամբ որովայնին (ՆՀԲ): Գաւ- արմատը ավելի շատ վերջադաս է. Գլխագար, խնւագար, լեզուագար: Ուշ շրջանից՝ ցավագար, որտեղ արդեն գար- գիտակցվում է որպես ածանց: Արդի հայերենում էլ գաւ-ը ածանցական արժեքով է ընկալվում միայն:

Դաւ⁸- արմատը առկա է միայն դահամունք «ծոն, նվեր» բառի մեջ. Զերեւելի դահամունս մերոց (Գ. Մմէ, Գ. 11): Զպտուղս ձեռաց ձեռոց, և զդահամունս ձեր (Թիւր, իր, 2):

Դաւա «ձեռք» բառով գրաբարը ունի դաստակ, դաստապան, դաստառակ, դաստիարակ: Սրանք բոլորն էլ ամբողջական փոխառութիւններ են: Անշուշտ գրաբարում գիտակցվել է դաւա «ձեռք» նշանակութիւնը, որովհետև երբեմն դաստ բաղադրիչի փոխարեն հեղինակը օգտագործում է ձեռք բառը: Գրաբարյան փուլում դաւաի անկախ կիրառութիւն մեզ չի հասել: Միջին հայերենի շրջանից այդպիսի կիրառութիւն կա: Իբրև զանօթ բրտի փշրել՝ զապրստամբեալսն, որ գան ի դաստ (վկայված է XIII դարից):

Դուխտ «աղջիկ» բառը նույնպես հայերենում անկախաբար չի կիրառվում, այնինչ այն առկա է բազմաթիվ իգական անունների մեջ, որպես երկրորդ բաղադրիչ. Սահականդուխտ, Զարմանդուխտ, Միհրանդուխտ, Որմիդդուխտ: Բառակազմական նույն կաղապարն է և իրանական լեզուներում. հմմտ. Artax-Satr-duxt, Mitrduxt և այլն: Նկատելի է, որ վաղ գրաբարում դուխտ-ը հանդես է գալիս այնպիսի բարդ բառերի կազմում, որոնց առաջին բաղադրիչը նույնպես իրանական բառ է: Ըստ երևութիւն, հայերենը սկզբնապես փոխառել է դուխտ-ով իրանական հատուկ անուններ, սրանց համաբանութիւնամբ ստեղծել ոչ իրանական անձնանուն + դուխտ կազմութիւնը:

⁵ Արշա-ի ստուգաբանութիւնը Գ. Զահուկյանին է. տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 2, էջ 21:

⁶ Եթե այն, իրոք, իրանական է:

⁷ Գար-ի ստուգաբանութիւնը տե՛ս է. Աղայան. Բառաքնական և ստուգաբանական հետազոտութիւններ. Երևան, 1974, էջ 50—51:

⁸ Դահ-ի ծագման մասին տե՛ս G. Bolognesi. La fonti dialettali cegle impres-
sati iranice in armeno Milano, 1960, p. 30.

⁹ Հմմտ. Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի (Խոր. ՄԵ7): Վասն ձեռակերտի, որ կոչի Երուանդակերտ (ն. տ.):

Իրո՞ւժ «նենգություն, խարդախություն» բառը ՆՀԲ-ն չունի, կա ԱԲ-ում, սակայն բառը անկախաբար չի կիրառվում, այլ միայն որպես բաղադրիչ. ուխտադրուժ, տիրադրուժ, բարեդրուժ, դրժողութիւն և այլն:

Նրախտ— արմատով բարդված ձևերը բավական շատ են. երախտիք, երախտագործ, երախտակորույս, ապերախտ, երախտաւոր, երախտառու և այլն: Բերենք մի քանի վկայութիւն. Վասն երախտեայ առն միոյ տկարի (Գործ. գ. 9): Զանձինս իւրեանց երախտաւորս համարէին (Բ. Մակ., ԺԲ, 23):

Նրախտ¹⁰ «գրավական» Ն. Հ. Բ.-ն բառի անկախաբար կիրառության մեկ օրինակ ունի միայն. Ահաւասիկ երաշխս իմ թափեալ ձեզ: V դարից են յերաշխի առնուլ, յերաշխի առնել հարադրությունները. Այր բարերար յերաշխի առնէ զմերձաւորն (Սիր. ԻԲ, 19): Մատայի քս առեալ է յերաշխի զմանուկդ ի հօրէ իւրմէ (Մն. ԻԳ, 9): Նրաշխ արմատով գրաբարն ունի երաշխիք, երաշխաւորեմ, երաշխաւորութիւն... և այլն:

Ձեն «դոհ»-ի համար բառարանները (ՆՀԲ, Արմ.) վկայակոչում են անկախ կիրառության մեկ դեպք. Ձենաւ մեզ զեն պատարագ...

Բանասեր Ա. Վարդանյանը հայերենը համեմատելով ասորական բնագրի հետ, գեն-ը ուղղում է եզն¹¹, ըստ այդմ՝ «Եզնն նմա զեզն պարարակ», որը համողիչ է: Այդ արմատով կազմված ձևերից են. զենածոյ, զենական, զենակար, զենարան, զենեմ, զենելութիւն, զենլի, զենումն նաև անզեն, անզենլի, զանազեն, մարդազեն... և այլն:

Ժէտ(ձետ)— բաղադրիչը գտնում ենք մի շարք բառերում. ախտածէտ, գիւտծէտ, լուսնածէտ, նենգածէտ, որկորածէտ(ութիւն)...: Արմատական բառարանում ժէտ-ը կապվում է պհլ. zaiān, պրս. zadan «հարվածել» բառի հետ: Ըստ այսմ ախտածէտ նշանակում է ախտահար:

Ընդունելով Աճառյանի մեկնությունը, է. Աղայանը գտնում է, որ ժէտ-, ժետ-ժատ- ձևույթները հայերենում սխալագրություններ չեն, այլ՝ հին իրանական (հին պարսկերեն և ավեստերեն) gan «խփել, հարվածել» բայի անսորոշ դերբայները՝ Jaidyāi, Jaiti. բացարձակը՝ Jātəm¹²: Մեր կարծիքով հին իրանական լեզուների հետ ունեցած անմիջական առնչությունը ժխտվում է ժ-ի գոյութիւնը (Վերջինս պարթևական կամ համեմատաբար միջին իրանական լեզուներին բնորոշ հնչույթ է): Նկատենք նաև, որ ժոտ-, ժուտ- ձևերը հայերենում ուշ են ավանդված և ածանցային արժեք ունեն:

Խազ «քար» բաղադրիչը առկա է գալլախազ, գալլախազեայ բառերում: Բերենք մեկ օրինակ. Սուրս քարեղէնս գալլախազեայս (Յեսու, է, 3): Խազի ծագումը ըստ Արմատական բառարանի ենթադրվում է պհլ. *xāz «քար» բառից, որ հաստատում է պրս. xāz «մի տեսակ քար»¹³:

Խոհ— «կերակուր, ճաշ». ունենք մի շարք բառեր խոհակեր, խոհակերել, խոհակերոց, խոհակերութիւն, խոհակ, խոհանոց, խոհավաճառ, խոհապետ: Ահա մի քանի օրինակ. Այս տունք են խոհակերաց, ուր հասուցանիցեն պաշտօնեայքն առնն զզենլիս ժողովրդեանն (Ա. Թագ., բ. 23): Խոհակերոցք շինեալք ի ներքոյ պատշգամացն շուրջանակի (Յզեկ. Խզ, 23): Զծառայութիւն պարտիզին և զխոհանոցին ոչ խափանել (ՆՀԲ):

Խոհ— արմատը հանդես է գալիս նաև խահ, խոխ, խախ ձևերով, հմմտ. Առեալ զորդին՝ խահագործեաց և եփեալ եդ առաջի առնն (ՆՀԲ): Որովայն ի

¹⁰ Կա և երաշխ «աշխտ» համանունը, որը անկախաբար կիրառվում է:

¹¹ Ա. Վարդանյան. Բառաքնական նոր դիտողություններ.—ՀԱ, 1914, էջ 124:

¹² է. Աղայան. Նշվ. աշխ., էջ 74—75:

¹³ Վիճելի է ծագումնաբանական կապը: Գալլախազ և դատախազ բառերում խազ բաղադրիչը արդյո՞ք նույնն է. կապ չունեն խազ «դիծ, ճեղք» բառի հետ, որը կովկասյան լեզուներից կատարված փոխառություն է համարվում: Գալլախազ-ը բառարանները (ՆՀԲ, Արմ.) մեկնում են «կարծր քար»: Ըստ Աճառյանի գալլախազ բառի կազմությունը արդյունք է մի հին ավանդության կամ հավատալիքի (տե՛ս Արմ. գալլ բառի տակ): Արեղյանը գալլախազը մեկնում է «գալլ պատառոց» կամ «գալլ ալրոց» (տե՛ս Արմ.):

խահակերութենէ ոռոգեալ կերակրովք (ՆՀԲ): Խախամոֆ, ամողխախ, խախ-կեօ (տե՛ս Արմ.) և այլն:

Խոհ- արմատի անկախ կիրառութիւն վաղ դրարարում չկա: Օգտագործել է Գրիգոր Մագիստրոսը. Վեհ կազմելով զխոհ երախանին բաղմաղան խորտկաց (ՆՀԲ): Խահ-ը անկախաբար վկայված է ավելի վաղ (VIII դար): «Պատրաստել զխահսն: Լի են խոհիւք սեղանք» (ՆՀԲ):

Կարելի է կարծել, որ խոհ(խահ)-ի անկախ կիրառութիւնը եղել է վաղ գրարարում, մանավանդ որ խոհ-ը բարդվում է հայերեն բառերի հետ: V դարից ունենք, օրինակ, խոհակերոց բառը:

Խոստ- առկա է մի շարք բառերում. խոստանալ, խոստումն, խոստաբանութիւն, խոստաւոր «ուխտի նվեր», խոստ լինել «խոսք տալ»։ Ի խոստ ածել «մի բան խոստանալ, գաղտնիքը ասել տալ»։ Խոստ-ի մի այլ տարբերակն է խոստովան-ը, որը նույնպես անկախ կիրառութիւն չունի (խոստովան առնիմ, խոստովան լինիմ, խոստովանաբար, խոստովանադուստր, խոստովանական, խոստովանակից, խոստովանեմ... և այլն):

Խուն «սեղան» հանդիպում ենք միայն Խունաւագութիւն բարդութեան մեջ. Ուր մեզ խունաւագութիւն և խոհակերութիւն պիտանացու և ոչ երբեք (ՆՀԲ): Արմատական բառարանում խունաւագութիւնը ստուգաբանվում է պհլ. *xun «սեղան» + հյ. աւագ քառերից, իբրև սեղանապետ¹⁴:

Վերտ «գործ, շինութիւն» բառի առանձին գործածութեան մի քանի օրինակներ կան միայն՝ այն էլ ուշ շրջանից: Դասական գրարարում կերտ-ը հանդես է գալիս միայն որպես բարդութեան երկրորդ բաղադրիչ. աստուածակերտ, դաստակերտ, ըղծակերտ, հնարակերտ... և այլն: Կերտ-ը նաև տեղանվանակերտ է. Խոսրովակերտ, Վաղարշակերտ, Տիգրանակերտ, Երունդակերտ, Վարդակերտ...:

Հեշմակ «դե, սատանա» առկա է միայն հեշմակապաշտ բառի մեջ, որը մեկ անգամ վկայված է Եզնիկի մոտ. Յամենայն դարս աստուածապաշտք գտանէին, որք յանդիմանէին զհեշմակապաշտսն (Եզն. 230): Աճառյանը ընդգծվածը համարում է սխալագրութիւն և ուղղում՝ հեշմակապաշտ (տե՛ս Արմ. նշված բառի տակ): ՆՀԲ-ը հեշմակը համարում է վրացական փոխառութիւն՝ էշմակի «դե, սատանա»: Սակայն հայերենի և վրացերենի փոխառութեան սկզբնաղբյուրը իրանական լեզուներն են, տվյալ դեպքում ակ-ը հուշում է բառի պարթևական բնույթը:

Մաբգ¹⁵ «թռչուն» ներկայանում է լորամարգ, սիրամարգ թռչանուններում:

Շատ- արմատը հանդես է գալիս որպես մի շարք տեղանունների երկրորդ բաղադրիչ. Արտաշատ, Աշտիշատ, Երուանդաշատ, Վասակաշատ...:

Իրանական լեզուներում նույնպես ՏՃԷ-ով տեղանուններ կան, սակայն ի տարբերութիւն հայերենի այնտեղ այն նախադաս է¹⁶:

Ոյգ- եթե այս արմատը իրոք իրանական ծագում ունի (տե՛ս Արմ. ոյմ՝ բառի տակ), ապա այն առկա է միայն առույգ բառի մեջ. առ- ոյգ:

Պահանջ-ը անկախ կիրառութիւն ունի միայն արդի հայերենում: Գրարարում անկախ կիրառութիւն վկայված չէ: V դարից ունենք պահանջեմ, պահանջանք, պահանջիլ, պահանջող, պահանջումն:

Պաշտ-ը նույնպես անկախաբար չի կիրառվում. Պաշտ-ով կազմված ձևերից նշենք մի քանիսը. պաշտումն, պաշտակ «ծառայ», պաշտօն, պաշտօնեայ, պաշտեք: Պաշտպան-ը ամբողջական փոխառութիւն է: Պաշտ-ի պարիշտ-

¹⁴ Բառիմաստը համոզիչ է. *xun-ը ավելի շատ սպասելի էին խան, խոն ձևերը:

¹⁵ Համանուն մաբգ «մարգագետին» բառը գործածվում է անկախաբար:

¹⁶ Արդի հայերենում շատ-ը գործուն տեղանվանակերտ ձևույթ է, սակայն այն ունի երազում, շատ իմաստը. հմտ. Այգեշատ, Մրգաշատ և այլն: Պետք է նշել նաև, որ այնքան էլ համոզիչ չէ գրարարի շատ տեղանվանական ձևույթի ՏՃԷ «ուրախ» բառի հետ ունեցած կապը:

սարքերակը նույնպես առանձին չի գործառուում. վերջինով կազմված ձևերը զգալիորեն քիչ են պաշտ-ով կազմություններից (ամբարիշտ, բարեպարիշտ, պարշտութիւն...):

Պատկան- իր. *patkan «նետ» բառը առկա է պատկանդարան «կապարձ» բառի մեջ, որը կարող է լինել և ամբողջական փոխառություն: Բանասեր Ա. Վարդանյանը բերում է պատկան-ի նոր վկայություն ևս. Պատկանեցէք ի նա զհամբաւս իբրեւ զնետս և ձգեցէք ի Յոթ՝ որպէս ի նպատակ¹⁷: Արմատի ույլ կիրառություն առաջիմ հայտնի չէ:

Ուոշն- առկա է «ոռչնական լուսավոր» ոռչնութիւն «լուսավորություն» բառերի մեջ: Իտգրաբարյան շրջանում կա ոռչան «պայծառ»... զգինին ուշան, որ քու տեսուղ նմանեցաւ (Կ. Երզնկ.): Բառարանները վկայում են նաև ոռչինա (տե՛ս ՆՀԲ):

Ուտ «գետ» բառին հանդիպում ենք մի շարք գետանուններում: Մարգոտտ, Մարովիտտ, Աղանդոտտ, Բաղանդոտ (նաև՝ ոտտիբաղա, որն իրանական լեզուներից բնորոշ իզաֆետային կազմություն է):

Վտար- արմատից գրաբարում հաճախական է վտարել բայը: Այլ կազմություններից են վտարակ, վտարանդի, վտարական, վտարանդել:

Սարդ- իր. *sard- «տարի» ներկայանում է միայն երեք բառում. աւսարդ «ծեր», երիտասարդ, նավասարդ: Երեքն էլ ամբողջական փոխառություններ են, ծագումնաբանորեն բարդ բառեր:

Վէժ- արմատից ունենք վիժել, վիժիլ նաև վիժուլ բայը: Ավելի հաճախ վէժ-ը հանդես է գալիս որպես երկրորդ բաղադրիչ. գահավէժ, դարավէժ, ծովավէժ, քարավէժ:

Տար- «հեռու, հեռավոր», «զատ, դուրս», նաև ունի շ, ապ ժխտականի իմաստ. գործածվում է միայն աշխարհ¹⁸ բառի հետ: Տար աշխարհ հարկանիցես: Գնաց ի տար աշխարհ (ՆՀԲ): Ընդհանրապես, տար-ով կազմությունները շատ են. տարաշխարհիկ, տարադիմիկ, տարագիր, տարակաց, տարածամ և այլն: Առկա են տար+գոյ (տարաբան, տարաբուն), տար+բայ (տարաբեր, տարաբերել), տար+դերբայ (տարաբերող, տարագրիչ):

Ինչպես տեսանք, գրաբարում իրանական ծագմամբ մոտ 40 բառեր (արմատներ) անկախաբար չեն կիրառվում, կամ այդպիսի կիրառության եզակի օրինակներ են վկայված միայն:

Վերոհիշյալ բառերի հաճախականությունը և զուգորդման (բառակազմական) հնարավորությունները տարբեր են: Կան այնպիսիք, որոնք որպես լսողադրիչ առկա են մեկ-երկու բառերի մեջ (խազ, պատկան, ապարթան, ապր...), ընդհակառակը, մի խումբ բառեր բառակազմական լայն հնարավորություններ են դրսևորում (զատտ, ատր, կերտ, տար...):

Ապառ, կերտ, ջատ ձևերը հոմանիշային խումբ են կազմում որպես տեղանվանակերտ բաղադրիչներ:

Իմաստով նույնական կամ մոտ որոշ բառային զույգերում կարելի է տեսնել հին ու նոր ձևեր (Արգաւոթ, ոյգոյթ): Արգ և ոյգ-ը ամենայն հավանականությամբ փոխառվել են միջին իրանական փուլից առաջ:

Նույնաբան (նույնահիմք) բառեր

Իր. *band- միջ. պրս. band «կապ»: Սրա անմիջական արտացոլումը հյ. քանդ-ն է: Իրանական հիմքի անցյալի ձևը՝ basta գտնում ենք պատուաստ, բաստարան, մեր կարծիքով և նուառտ բառերում:

band-ի vand (ւանդ) ձևով հայերենը մի շարք բառեր է փոխառել. եթե վիճելի է արգաւանդ, բարձրաւանդակ, սարաւանդ, գահաւանդ, դարաւանդ բառերում, ւանդ «կապ» բաղադրիչի իսկությունը, ապա ներքոհիշյալ բառե-

¹⁷ ՏԵՍ 2Ա, 1912, էջ 625:

¹⁸ Է. Բենվենիստը տար աշխարհի համար ենթադրում է իր. *tara-xšatra (REA, 1964, p. 5) խոսկ տարածամ-ի համար վկայակոչում է սողդ. trzmn (ն. տ.):

րում հաստատապես այդ բաղադրիչն է. աշխատաւանդ «թագի կապ», ապա-
ւանդ(ակ) «շվան, պարան», բաճուանդ (կանացի զարդ է, բառացի «բազկա-
կապ»), մեճեւանդ (զարդ է), պախճաւանդ «գոտի», պարաւանդ «ոտքի, ձեռ-
քի կապ», որից՝ պարաւանդեմ «շղթայել, կապել», դանդաւաւանդ «սանձ»,
բառացի՝ «ատամնակապ»:

dāta, dat «օրենք». առկա է դատ, դատախազ, դատաւոր, դատաստան
բառերում: Այս արմատի հնչյունափոխված տարբերակն է նաև ապիրատ-ը
(ape-dal):

dar «դուռ». դարապան, դարապաս, դարապետ, հավանորեն և դրանիկը,
բարապան (վերջինս ենթադրում է փոխառութիւն այլ աղբյուր՝ պարթևերէնը,
իսկ դար-ով ձևերը միջին պարսկերենից կատարված փոխառութիւններ են)¹⁹,
dēt «նայել» հ. ղէտ նաև մի շարք բարդված ու ածանցված ձևեր, նաև՝
պարէտ (միջձայնավորային դիրքում d>ɾ օրինակափ հնչյունափոխութեամբ):
Հպրս. gauša, միջ. իր. ɣōš «ականջ» հայերենում ներկայանում է գոյշ «զգուշ,
չինի թե» (հանդես է գալիս հատկապես գոյշ թե գոյշ ուրեք կապակցութեամբ),
գուշակ, բանդագուշ, հանգուշ, մարգանգուշ. նշված արմատն է և զգուշ բա-
ռում, որտեղ եթե զ-ն հայերենի նախդիրը չէ, ապա բառը ամբողջական փո-
խառութիւն է: Հպրս. kausa «կողմ», հ. կոյս «կողմ». կ>ք հնչյունափոխու-
թեամբ՝ Բուստ «կողմ», Գ. Ղտփանցյանը այդ արմատն է տեսնում և անդուսել
«արհամարհել» բառում: Պատգոսապան «կուսակալ» բառում նույնպես այդ
արմատն է՝ կ>գ հնչյունափոխութեամբ: kaɲ «փորել, քանդել». կան ձևով
առկա է ական «փոս, անցք», նկան, նկանակ. այդ արմատն է թերևս ապակա-
նեմ բառում. կանդ ձևով (իր. kaɲd անցյալի հիմք)՝ կարկանդակ, վկանդեմ.
կ>ք հնչյունափոխութեամբ՝ Բանդակ, Բանդուկ. a>ե հնչյունափոխութեամբ՝
պարկէն «պարսպի շուրջ փորված փոս» (միշտ օգտագործվում է փոս բառի
հետ. պարկէն փոսի, պարկենաւ փոսի և այլն), քաշկէն? «գարնհաց»²⁰, kaɲ
«գործ», «անել»: Այս արմատով հայերենում փոխառւալ շատ բառեր կան: Վե-
րոհիշյալ իրանական արմատը ներկայանում է մի շարք հնչյունափոխված
ձևերով, որոնք ամենայն հավանականութեամբ գալիս են փոխատու աղբյուր-
ներից: Կ-ով ունենք քրտիկար, վնասակար, օգտակար: Վնասակար-ը ամբող-
ջական փոխառութիւն է, օղտակար-ը թերևս համաբանութեան արդյունք է,
թեև ենթադրութիւններ կան բառի ամբողջական փոխառութիւն լինելու օգ-
տին: Անկախ այս բոլորից գտակար-ի կար բաղադրիչի իրանական ծագումը
կասկած չի հարուցում²¹, կարող ենք նշել և կոռոպետ-ը «արհեստապետ»՝
ը>ռ հնչյունափոխութեամբ: Բ-ով՝ պայքար Բրտիկար, Բարտար «շինվածք,
կերտվածք»: (Հմմտ. հրաշաքարտար, աղիւսաքարտար, վկայված են հոգրա-
բարյան փոխում): Գ-ով՝ անդար «համարել, մի բանի տեղ դնել», ըստ Ար-
մատական բառարանի պհլ. angartan-ից, որը ենթադրում է ham+kar «անել,
կատարել»: a>e (ա>ե). կերտել, խոնակել «խոհարար», աղօթկեր «աղոթք
անող», պատկեր²²: Այստեղ կարելի է նշել և աշակերտ բառը, որի հիմնա-
ւորման համար սակայն լրացուցիչ փաստեր են պետք: Ճ-ով՝ անառ «սարք»,
նառ, նարտար, նարպիկ, նարտարապետ: k>ճ հնչյունափոխութիւնը գործել
է իրան. լեզուներում. հմմտ. հպրս. čartana (kar-«գործ, անել»-ից): kar-ča
արմատն է թերևս վաճառ բառում, պհլ. v āčār²³:

¹⁹ Բառ արմատը բարա «զոնակ» ձևով առկա է Ղարաբաղի բարբառում, որը, սակայն,
նոր պարսկերենից կատարված փոխառութիւն է:

²⁰ Պարկէն և քաշկէն բառերում kaɲ-ի գոյութիւնը կասկածելի է:

²¹ Եթե նախնական կապ կա kar «գործ» և kar «ուժ, զորութիւն» արմատների միջև, ապա
աւելար, տկար, ապիկար, կարաւար, կարի... բառերն էլ կարելի է զետեղել այս շարքում:

²² Վանկարար ar-ի ւր, ւր փոփոխութեան մի շարք օրինակներ և երևութի պատճառի մա-
սին տե՛ս A. Ghilain. Essai sur la langue parthe. Louvain, 1966, p. 97.

²³ Sб'у Основы иранского языкознания, М., 1981, с. 55.

ma շափելը իրանական արմատը (հ. Բ. *me-) ի հայտ է գալիս մի շարք բառերում, որոնք ամբողջական փոխառություններ են. համեմատ²⁴, համեմաղ հակառակ, դատախազ, պայման (համապատասխանությունը միջ. իր. pāman շափ, սահման, համաձայնություն-ի հետ ակնհայտ է): Պարմայել, հրաման-բառերի արմատը նույնպես ma -ն է: Ըստ երևույթին ամայի բառում էլ ենթադրելի է այդ արմատը:

Mōč(mōč) հագնել նշված արմատն է իրանականից փոխառյալ մուհակ լեզուից պատմունակ հանդերձապետ, պատմունակ զգեստ բառերում: Ամենայն հավանականությամբ նույն արմատն է և մոլ լեզուից բառում:

Հպրս. pāda միջ. իր. pay, pād «ոտք» առկա է պայիկ հետիոտն զինվոր, ավելի ուշ շրջանից փոխառյալ փայիկ սուրհանդակ բառերում: Պարաւանդ-ում դարձյալ այդ արմատն է՝ միջձայնավորային դիրքում d>r հնչյունափոխությամբ, այդպես է թերևս և հրապարակ-ը՝ *fraparak ենթադրյալ ձևից (տե՛ս. Արմ. բառարան)²⁵:

Պարեկ պահապան, շրջադետ բառը Աճառյանը նույնացնում է պահակ, պահակապան բառերի հետ: Պարեկ բառով ունենք պարեկապան, նաև պարակապան, «պահնորդ, դետ»: Կարելի է ենթադրել դարձյալ pāda «ոտք» բաղադրիչը. դժվարություն է հարուցում-եկ-ձևույթի հարցը: Համենայն դեպս իր. որևէ ածանցի հետ ունեցած կապը հստակ չէ: Ծթն ընդունենք պարակ ձևի առկայությունը (եթե պարակապանը սխալագրություն չէ), ապա ակ-ը անշուշտ իր. ak(ağ) ձևույթն է, որը նաև ենթակայական դերբայի ցուցիչ է: Այս դեպքում Պարեկ-(ակ)-ի համար կարելի է տեսնել նախնական «ոտքով շրջող» իմաստը:

*past(pust)pas «թիկունք, մեջք» արմատը առկա է պաշտպան, պառնիկ զինվոր, սպասավոր, պ>փ հնչյունափոխությամբ փուշտիպան «թիկնապահ» փուշտիպանսաղար (պաշտոն է) նաև փաշաման զոհչում բառերում: Փ-ով ձևերը ակնհայտորեն ավելի ուշ կատարված փոխառություններ են:

pat-առկա է նպար, պարէն, նաև ամբար բառերում:

gam(a)-ով ունենք երամ, երամակ, ռամիկ:

rañ «ճանապարհ» ապարահ, ռահվիրայ, ռահ:

հ. պրս. raucan միջ. պրս. roč «օր, լույս» առկա է ոռհիկ, պատրուհակ, ոռն[ական] «լուսավոր», նաև պատրոյգ բառերում:

Միջ. իր. ian «մարմին» գտնում ենք ապարթանեմ հանդգնել, խրոտանալ, մենթան զգեստ, հանդերձ բառերում: Կարելի է կարծել, որ պատանի բառի մեջ էլ նույն արմատն է:

tar առկա է վառ, օտառ բառերում (տե՛ս նաև վերը բերված տար աշխարհ կապակցությունը)

vak(vač) «խոսել» պահված է նուազ, նուան, միջին հայերենյան փուլից ավանդված աւաչ «ձայն» բառերում: Կասկածելի է բարգաւաճ²⁶, ամբարհաւաճ բառերում vač «խոսել» արմատի իսկությունը: vağ «ծածկոց, ծածկել»: Գտնում ենք փոխառյալ մի շարք բառերում. նուառտան «ծածկոց», սաղա-

²⁴ Համեմատ-ի իրանական ծագման մասին տե՛ս G. Bolognesi. Note iraniche e armene. Milano, 1960, p. 5—6.

²⁵ Բենվենիստը *frapad բաղադրիչը առաջարկում է կապել ավեստ. padya «հաստատել, որոշել» pāda «նառավայր, հիմնարկ, հիմնադրում-ի» հետ: Վե՛ս BSL, 1957—58, Paris, t. I p. 63: Պարզապար բառի երկրորդ բաղադրիչը արդյոք pāda «ոտք»-ը չէ՞:

²⁶ Է. Աղայանը բարգաւաճի համար ենթադրում է հ. Բ. * bhārg- «լցնել, ուռճացնել» և իր. āvac «ձայն» (տե՛ս. Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 41): Գ. Զահուկյանը նկատում է, որ սողունների Brvwey «երջանիկ, ունեղ, բարգաւաճ» զուգահեռը կասկած չի թողնում հայերեն բառի իրանական ծագման մասին, թեև իհարկե սրա աղբյուրը պետք է լինի սողունների ցեղակից պարթևերեն մի ձև (տե՛ս Գ. Զահուկյան. Հայ-իրանական զուգադիպումներ. — «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 2, էջ 23):

վարտ, վարագոյբ, վարտիք անգրաւարաիք (վերջինս ամբողջական փոխառութիւն է), վերմալ, վերա «գրահ», տաղաւար, պատուար? բառերում:

vaēd (vēd) «գիտենալ» հրաւէր, նուէր, պատուէր, պատուիրան: x^{va}ac «ուտել» արմատով ունենք ախոռ, խորաիկ, ապաղարէ՝ ճիշտ ձևը՝ ապխոր «ջրաման»:

Վերոհիշյալ բոլոր բառերը առանձին փոխառյալ միավորներ են: Որոշ բառախմբերում նույն արմատի գոյութիւնը համեմատաբար հեշտ է նկատվում (գոյշ, գար, բաճ...), այլ դեպքերում պահանջվում է սաուգարանական ավելի մանրակրկիտ աշխատանք:

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում հնչյունափոխած տարրերակները, որոնք նպաստում են բացահայտելու փոխատու լեզվի հնչյունափոխութեան որոշ օրինաչափութիւններ, ապա նաեւ՝ փոխառութեան բուն աւելորդի ու ժամանակագրութեան հետ կապված հարցեր:

НЕКОТОРЫЕ ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ИРАНСКИХ ЗАИМСТВОВАНИЙ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Л. Ш. АВАНЕСЯН

Резюме

В статье рассматриваются: а) некоторые слова (корни) иранского происхождения, которые в армянском языке самостоятельно из употребляются, а являются лишь компонентами сложных и производных слов, б) несколько корней, встречающихся как отдельно, так и в составе разных слов, в которых они выделяются только этимологически. Ср.: dēl арм. դէլ и պարէլ и т. д.